Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020թ. մայիսի 12-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3 - Մասհանման ժամկետի երկարաձգում» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարություն

Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, փուլ 3

Վարկային համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև

Մասհանման ժամկետի երկարաձգում

Վարկային համաձայնագիր (փոփոխված 2018թ. հունիսի 20-ին)

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 27

Գումարը՝ 30,000,000 եվրո

BMZ-No.՝ 201366343

Վարկ No.՝ 26525

(Վարկային համաձայնագիր)

Հարգելի նախարար Ջանջուղազյան

Հղում կատարելով վերոնշյալ Վարկային համաձայնագրին և վերջինիս փոփոխությանը և ի պատասխան Ձեր՝ 2019թ. նոյեմբերի 22-ի գրության, տեղեկացնում ենք, որ Վարկային համաձայնագրի 3.2 հոդվածով սահմանված մասհանումներ կատարելու վերջնաժամկետը կարող է երկարաձգվել մինչև 2022թ. դեկտեմբերի 30-ը՝ պայմանով, որ դուք մասնակիորեն կկրեք երկարաձգման հետևանքով ՎՎԲ կողմից փոխհատուցման ենթակա ծախսերը։

Փոխհատուցման ենթակա վճարները (“Երկարաձգման վերջնական վճար”) վարկի մասհանումների ժամկետի՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 30-ը երկարաձգելու համար, կհաշվարկվի ՎՎԲ կողմից՝ կապիտալի շուկայի պայմանների հիման վրա, որոնք կգերակայեն վերջնական հաշվարկի օրը։

Երկարաձգման վերջնական վճարի մի մասը՝ 960,000 եվրո գումարի չափով, պետք է վճարվի Վարկառուի կողմից։ Այդ մասնաբաժինը կազմում է 960,000 եվրո, եթե այլ բան համաձայնեցված չէ Վարկառուի և ՎՎԲ միջև գրավոր կերպով։

Խնդրում ենք ընդունել սույն նամակի դրույթները մինչև ս.թ մայիսի 30-ը և հավաստել, որ Երկարաձգման վերջնական վճարի վճարման համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերը (բացի սույն նամակի վավերացումից) ավարտված են։ Սույն նամակի վավերացման վերաբերյալ Ձեր գրավոր հավաստումն ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում կտրամադրվի փոխանցման համար անհրաժեշտ հաշվի վերաբերյալ տեղեկատվությունը։ Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այդ պահից Երկարաձգման վերջնական

վճարը կդառնա պարտադիր և վճարման ենթակա։

(i) Մինչև 2020թ. մայիսի 30-ը Ձեր՝ սույն նամակի դրույթների առնչությամբ համաձայնությունը , (ii) ոչ ուշ, քան 2020թ. սեպտեմբերի 30-ը սույն նամակի վավերացման վերաբերյալ Ձեր գրավոր հավաստումը և (iii) Երկարաձգման վերջնական վճարը ստանալու դեպքում, ՎՎԲ-ը համաձայն է Վարկային համաձայնագրի հետևյալ փոփոխություններին՝

Բաժին Ա՝ Մեկնաբանում

Բացառությամբ սույն նամակով սահմանված դեպքերի կամ եթե ենթատեքստով այլ բան չի պահանջվում, Վարկային համաձայնագրում մեծատառով գրված եզրույթները սույն նամակում ունեն նույն նշանակությունը։

Բաժին Բ՝ Վարկային համաձայնագրի փոփոխություն

Վարկային համաձայնագիրը փոփոխվում է հետևյալ կերպ.

Հոդված 3.2-ը հանվում և փոխարինվում է հետևյալով.

«KfW-ն իրավունք ունի մերժել մասհանման կատարումը 2022թ. դեկտեմբերի 30-ից հետո»:

Բաժին Գ՝ Շարունակականություն

Վարկային համաձայնագրի և վերջինիս փոփոխության բոլոր մյուս դրույթները, բացառությամբ սույն նամակով փոփոխված դեպքերի, մնում են անփոփոխ և շարունակում են գործել և մնալ ուժի մեջ։

Բաժին Դ՝ Հավելյալ դրույթներ

1. Սույն նամակը չի փոփոխում կամ մերժում Վարկային համաձայնագրի և վերջինիս փոփոխության որևէ այլ դրույթ, և մասնավորապես՝ չի մերժում Վարկային համաձայնագրի ներքո մեր իրավունքներից որևէ մեկը, բացառությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն նամակում:

2. Վարկային համաձայնագրի Հոդված 10.3 (Հարկեր և այլ վճարներ), Հոդված 10.4 (Աճող ծախսեր), Հոդված 14.3 (Մասնակի անվավերություն և բացեր), Հոդված 14.4 (Գրավոր ձև), 14.6 (Կիրառելի օրենսդրություն) և 14.9 (Իրավական վեճեր) դրույթները ներառվում են սույն նամակում կարծես ամբողջությամբ սահմանված են սույն նամակում, և կարծես Վարկային

համաձայնագրի այդ դրույթների վերաբերյալ տեղեկանքները հղում են սույն նամակին:

3. Սույն նամակը կատարված է 2 բնօրինակով՝ անգլերեն լեզվով:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը տալ վերոնշյալ փոփոխությանը՝ ստորագրելով իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող ձևով և մեկ բնօրինակը վերադարձնելով KfW-ին:

Հարգանքով՝

KfW

[ստորագրություն]	[ստորագրություն]
Բաժնի պետ	Ծրագրի ղեկավար
Մարիոն Քնիշ	Մարի-Քրիստին Շոլ-Յանկ
KfW	KfW

Կարդացել և համաձայն եմ՝

Երևան _____

.....

Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ֆինանսների նախարարության

Անուն՝

Պաշտոն՝